

ԹՇՆԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՍՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԹՇՆԱՍԻ

Ռոբերտ Ձիջյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի
Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն

Ժողովրդավարության մեր դարաշրջանը սկզբնավորվել է Մեծ Ֆրանսիական Հեղափոխության զաղափարների շնորհիվ, որոնք այն ալեկոծ տարիներին արտահայտվել են «Հավասարություն, Արդարություն, Եղբայրություն» ոգեշնչող համաժողովրդական կարգախոսում: Եվ եթե հավասարության և արդարության հասնելու նպատակների մասին մինչ օրս էլ բոլորը շարունակում են կրքոտ դատել, իսկ որոշ երկրներում որոշ բաներ որոշ չափով իրոք արված են, ապա *Եղբայրության* մասին լիովին մոռացան և՛ Ֆրանսիական հեղափոխականները, և՛ ողջ մարդկությունը:

Հաղթանակած բուրժուազիան, արհամարելով և հասարակական կյանքից իսպառ վերացնելով եղբայրական փոխադարձ հոգատարության սաղմերն ու նշույլներն իսկ, մարդկության սոցիալ-բարոյական բարձրագույն պատվանդանը հատկացրեց անհատի ազատության դիմակի տակ՝ եսասիրությանը: Անհատի շահերի՝ իրականում՝ եսասիրության, երկրպագումը արագորեն համակեց ողջ աշխարհը և ստեղծեց անհատամոլության ու հարստամոլության փոխադարձ թշնամանքի թագավորություն:

Անհատամոլությունը և նրա բաղձանքը՝ հարստամոլությունն են այն խորքային գործոնները, որոնք սկսում են սոցիալական հակամարտությունները, դասակարգային պայքարը, տնտեսական և ֆինանսական ճգնաժամերը: Անհատամոլության և հարստամոլության գերիշխանության պայմաններում սոցիալական բարեփոխումների փորձերը կարող են միայն մի փոքր հետաձգել սոցիալ-տնտեսական կոնֆլիկտները և կործանարար ճգնաժամերը: Եթե անհատների հոգու և մտքի բարձրագույն արժեքը հարստությունը և իշխանությունն է, ապա ցանկացած աստիճանի բարեկարգված հասարակարգ ի վերջո կենթարկվի հաջողակ անհատների շահերին ու նպատակներին, իսկ հասարակությունը հերթական անգամ

կվերածվի փոխադարձ թշնամանքով, անարդարությամբ ու անբարոյականությամբ բռնաճնշման լցված աշխարհի:

Այսօր շատերն են հասկանում, որ հասարակության արմատական բարեփոխումը հնարավոր է միայն մարդ-անհատի սոցիալ-բարոյական բարեփոխման, և առաջին հերթին՝ անհատամոլության ու հարստամոլության ախտից ձերբազատվելու պայմանում: Սակայն մեծ սխալ կլինի սպասել, թե այդ երբ է մարդ արարածը բարեփոխվելու և դառնալու բանական էակին արժանավայել ապրելակերպին պիտանի: Այսօրվա հասարակությունը կարող է, և պարտավոր է, կոնկրետ քայլեր ձեռնարկել և պայմաններ ստեղծել, որպեսզի մարդ-անհատի սոցիալականացումը պարտադրաբար բարեփոխի նրա սոցիալ-բարոյական արժեքներն ու հասարակական վարքի նորմերը: Այդ մարդասիրական ապրելակերպի աստիճաններն են. լինել հանդուրժող, լինել ներողամիտ, լինել բարյացկամ, լինել հոգատար:

Հոգատարության սկզբունքով ապրելու ելակետային օղակը *ընտանիքն* է, այդ թվում նաև «ընդարձակված ընտանիքը»՝ հարաբերությունները *հարազատների* միջև: Մյուս կարևորագույն օղակը *աշխատանքային կոլլեկտիվն* է: Յուրաքանչյուր ձեռնարկությունում, բոլոր պետական և հասարակական կազմակերպություններում պետք է հաստատել հոգատարությամբ ապրելու սկզբունքը՝ նրանց կառուցվածքի ստորին օղակներում հաստատելով ընտանեական հոգատարության մթնոլորտ, իսկ համապատասխան կոլլեկտիվն ամբողջությամբ դիտարկելով որպես մեկ միասնական *մեծ ընտանիք*: Հոգատարությամբ ապրելակերպի ավանդույթը հաստատելու և տարածելու համար պետք է մշակել համապատասխան ապրելակերպի պահանջների իրավական փաստաթուղթ (կոդեքս), որի *անշեղ կատարմանը* պետք է հետևեն ինչպես կոլլեկտիվների անդամները, այնպես էլ ղեկավարները:

Բնական է ենթադրել, որ մարդկությունը դեռևս հոգեբարոյապես չի հասունացել միմյանց հանդեպ հոգատարությամբ ապրելու համար: Իսկ ընդհարապես, արդյո՞ք homo sapiens կոչեցյալը հասունացել է homo sociens կոչվելու համար. Արդյո՞ք մարդկությունը պարտաստ է բանական էակին արժանավայել կենսակերպով ապրել: Այստեղ պատասխանը նույնպես բացասական է: Վերջին տասնամյակներին գիտատեխնիկական միտքը

այնպիսի առաջընթաց է ապրել, որ զարգացաց երկրները ձեռնամուխ են եղել հետ-ինդուստրիալ հասարակարգի կառուցմանը, որտեղ արտահանման ու վաճառքի հիմնական արտադրանք է դառնում է և տրարական միտքը: Ցավոք, հենց նույն տարիներին աշխարհը ավելոծվեց «գունավոր հեղափոխություններով», «արաբական գարնան» արյունահեղություններով, եվրոպական երկրներում մուսուլմանական երիտասարդ միգրանտ-ների անգուսպ էլույթներով, որոնց հիմնական շարժիչ ուժը թշնամանքն ու ատելությունն է:

Դժվար չէ նկատել, որ վերոնշված զանգվածային սոցիալական բռնկումներն այնքան անհիմն էին և այնքան անսպասելի, որ բնականորեն ենթադրություն է առաջանում, որ թշնամանքի ու ատելության հրդեհի հրեշավոր ալիքի կայծը արտաքին ուժերի ձեռքի գործ է: Հայտնի է, որ «գունավոր հեղափոխությունների» ֆինանսական սնուցումը ստացվել էր դրսից: Մակայն զուտ ֆինանսական գործունը քավարար չէ զանգվածների հանկարծակի պոռթկում առաջացնելու համար: Որոշ մասնագետներ հիմնադր են եղանակով ենթադրում են հատուկ հոգեբանական «տեխնոլոգիաների» գոյությունը, որոնց տիրապետող ուժերը կարողանում են իրենց չար կապտակներին հասնելու համար ցանկացած երկրում առաջացնել թշնամանքի և ատելության ցունամի ալիքը:

Իհարկե, ատելության հիպոթետիկ զենքի տեր ուժերը այնքան խելացի են, որ նրանց մերկացնելը դժվար թե երբևէ հաջողվի: Բայց մենք, այդ չար ուժերի պոտենցիալ թիրախներս, պետք է գոնե այն նվազագույն աստիճանի խելամտություն ցուցաբերենք, որ կարողանանք մեր պետություններում նվազեցնենք և վերացնենք փոխադարձ թշնամանքի քայքայիչ և վտանգավոր դրսևորումները:

Մարդկությունը դարերն ի վեր գիտակցել է, որ հասարակական համակեցության կանոնները և սոցիալ-բարոյական ավանդույթները հաստատելու համար դրանք պետք է ամրագրվեն պետական և քրեական օրենքների ձևով: Հին աշխարհի բարոյա-կրոնական ուսմունքներում, այդ թվում նաև Հին կտակարանում, մարդկությանը ուսուցանել են՝ «մի սպանիր», «մի գողանա», «մի շնանա», ... Այդուհանդերձ, բոլոր ժողովուրդները ընդունել են նաև հստակ և խիստ պետական օրենքներ՝ մարդկային

համակեցության կանոնները ու պատգամները խախտող հանցագործների դեմ:

Ժամանակակից հասարակությունը անհատամտության տարածման պատճառով հայտնվել է հանրային համակեցության քայքայման եզրին, քանի որ անհատամտությունը հասարակությունում ծայրահեղ աստիճանի է հասցրել անհաղորժողականությունը, մարդիկ մոռացել են, թե ինչ է ներողամտությունը, իսկ միմյանց հանդեպ բարյացկամ վերաբերմունքն արդեն անհետանում է մեր առօրյա կյանքից: Վերջին հաշվով, անհատամտությունն է թշնամանքի տարածման հիմնական աղբյուրը:

Պատկերացնում եք ինչ հիանալի կյանքով մենք կապրեինք, եթե **բոլորս լինեինք միմյանց հանդեպ հանդուրժող, ներողամիտ և բարյացկամ**: Հետևաբար, մենք պետք է առաջին հերթին մեր կյանքից վերացնենք համայնական ապրելակերպի անմիջական թշնամուն՝ անհատամտության գաղափարախոսությունը:

Իսկ որպես այդ գործընթացի լիակատար ավարտ, անհրաժեշտ է **ընդունել կոնկրետ օրենքներ** և համապատասխան պատժամիջոցներ **թշնամանքի, անհանդուրժողականության, անբարյացկամության դրսևորումների դեմ՝** հատկապես, երբ դրանք կրում են գանգվածային, տիպական բնույթ:

Թերևս բոլորը համաձայնեն, որ թշնամանքի վերացումը ժամանակակից մարդկության կյանքից՝ սկսած միջանձնային հարաբերություններից և ավարտած միջպետական ու միջմշակութային հարաբերություններով, անհետաձգելի ու հրատապ խնդիր է: Բայց արդյո՞ք ուտոպիա չէ մարդկանց պարտադրել ապրել առանց թշնամանքի, արդյո՞ք հնարավոր է պատկերացնել պետական օրենքի ուժով թշնամանքը հասարակությունում նվազեցնելու իրատեսական ուղիներ:

Եկեք հասարակության բուժումը թշնամանքից սկսենք «չինտվնիկ-քաղաքացի» հարաբերություններից: Այստեղ դժվար չէ բացահայտել ու արձանգրել թշնամանքի դրսևորումը՝ հիմնականում չինտվնիկի կողմից: Եվ դժվար չէ նաև գտնել «թշնամանքի օրենքը» խախտողի համոզիչ ու արդյունավետ պատժամիջոց՝ օրենքը խախտողին պարտադրել շաբաթկիրակի օրերին քաղաքների ու բնակավայրերի փողոցներն ավելելու ու մաքրելու աշխատանքը:

Քանի որ «չինովնիկ-քաղաքացի» հարաբերություններից թշնամանքի վերացման խնդիրը ստանում է այսպիսի պարզ և արդյունավետ լուծում, ապա մենք իրավունք ունենք հուսալ, որ նմանատիպ օրենսդրական պարզ միջոցներով հնարավոր է թշնամանքը վերացնել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մակարդակներում:

Հասարակական կյանքից թշնամանքի վերացումը երկրի սոցիալ-քաղաքական գործընթացների կայունացման և ժողովրդի միասնությանը հասնելու կարևորագույն նախապայման է: Հապաղելու իրավունք մենք չունենք: Վերջին շրջանի կրակոցները դա են ահազանգում: